24669
Դ-39

ԴԵՊԻ ԻՍԱՀՄԱԿԱՆԱՑՈՒՄ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Ա. Մ. ԽՈՐՀՐԴԻ № 57.

331.88(47)
Դ-39

331.88(47)
Պ-39
15 JAN 2010

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ.

„ԱՇԽԱՏԱՆՔ"-Ի ԳՐԱԴԱՐԱՆ № 2

ԴԵՊԻ ՌԱԶՄԱԿԱՆԱՑՈՒՄ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Ա. Մ. ԽՈՐՀՐԴԻ № 57
ՅԵՐԵՎԱՆ—1927

2 APR 2013

24669

ՏՊԱՐԱՆ ՀԵՐՄԵՍ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ,
ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29
ԳՐԱՌԵՊ. 296բ
ՏԻՐԱԺ 250. Պ. 86

3295-84

ՌԱԶՄԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՅԻ

ՅԵՎ

ՀՐԱՁԳԱՅԻՆ ՍՊՈՐՏԻ ԱՇԽԱՏԱՆՔՆ ՈՒԺԵՂԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԲՈԼՈՐ ԱՐՀԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

ՀԱՄԿԽ-Ի № 89 ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ 27 ՀՈՒՆ. 27 Թ.

ԹԱՆԿԱԳԻՆ ԸՆԿԵՐՆԵՐ

Պատմական դեպքերին համընթաց ԽՍՀՄ-ի պաշտպանունակությունն ամրապնդելու խնդիրը առաջնակարգ տեղ է գրաված և բանվոր դասակարգի մյուս բոլոր խնդիրների շարքում կարևորագույն հարցերից մեկն է դառնում։ Ցերկրի տնտեսությունն ամրապնդելու, խաղաղ սոցիալիստական շինարարության աշխատանքն ուժեղացնելու հետ միասին՝ ռազմական պաշտպանությունն ամրապնդելու խնդիրները ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգի և նրա արհմիությունների ամենագլխավոր խնդիրներն են դառնում։

Ցերկրի պաշտպանունակության ամենագլխավոր պայմաններից մեկն այն է, որ աշխատավոր լայն մասսաները յուրացնեն ռազմական գիտություններն ու նորությունները։ Դրա համար էլ՝ հրաձգային սպորտի ու ռազմական խմբակների լայն տարածումը, ռազմական գիտելիքների մասսայական պրոպագանդան բանվորների ու ծառայողների մեջ՝ պիտի դառնա արհես-

տակցական կազմակերպությունների առաջնակարգ անելիքը։

ՀԱՄԿՄ-ի նախագահությունը բոլոր արհկազմակերպություններին առաջարկում է ի գեկավարություն հետևյալը։

1. Անհրաժեշտ է ուժեղացնել հրաձգային սպորտի աշխատանքները, ըստ հնարավորին բոլոր ակումբներում, կազմակերպել փոքրատրամաչափ (малокалиберный) հրացանի ձգարաններ (тир)։ Քաղաքներում ու բանվորական խոշոր կենտրոններում արհմիությունները պիտի համաձայնության գան զինվորական վարչությունների հետ, Պաշը-ավիաքիմի հետ՝ ոգտագործելու յեղած ձգարաններն ու հրաձգարանները (стрельбище), ինչպես և համաքաղաքային ու շրջանային ձգարանների շինարարությունն ընդլայնելու ուղղությամբ։ Պետք է միջոցներ ձեռք առնվեն, որ շատ ավելի մեծ թվով բանվորներ առաջ քաշվեն ֆիզկուլտ խմբակների հրաձգային սեկցիաները և հրաձգություն սովորելու համար ավելի մատչելի դարձվեն ձգարանները։ Բարելավել ֆիզկուլտխմբակների հրաձգային սեկցիաներին զենք ու պարագաների այլ հարմարություններ մատակարարելու գործը։ Հրաձգային սպորտի մրցություններ կազմակերպել՝ ինչպես առանձին միությունների, այնպես և միջմիութենական գծով։ Լավագույն արհմիությունը կլինի այն արհմիությունը, որը կարճ ժամանակում կարող կլինի դիպուկ (меткий) հրաձիգների խոշոր մասսաներ տալ։

2. Ռազմական գիտելիքների խմբակներ կազմակերպել այն ակումբներում, ուր չկան այդպիսիները

և յեթե հնարավոր կլինի, նման խմբակներ կազմակերպել նաև կարմիր անկյուններին կից։

Աշխուժացնել այդ խմբակների աշխատանքները, ընտրել նրանց համար բավականին վորակյալ գեկավարներ։ Բանվորների ու ծառայողների ավելի լայն մասսաներ քաշել ռազմական գիտելիքների խմբակների մեջ՝ նպատակ դնելով այդ խմբակները մասսայական ռազմական պրոպագանդայի կենտրոնը դարձնել ակումբներում ու կարմիր անկյուններում։

Հատուկ ուշադրություն դարձնել, որ ռազմական գիտելիքների խմբակների մեջ քաշվի յերիտասարդությունը։

Անհրաժեշտ է այդ խմբակների աշխատանքների մեջ քաշել նաև կանանց, սովորեցնել նրանց ռազմական գործը, հրաձգությունը, ռազմական կապը, բժշկական ոգնություն ցույց տալու ձևերը և այլն։

3. Անհրաժեշտ է ֆիզկուլտ խմբակների պարապմունքի մեջ մտցնել ռազմական գիտելիքների ու փորձառության տարրերը, հատկապես—ռազմակիրառական (военно-прикладные) վարժություններ (հրաձգություն, վազք հատվող տեղերով, վազք արգելքների միջով, ավիացիոն սրամարտություն և այլն)։

4. Ուժեղացնել ռազմական գիտելիքների ու յերկիրը ռազմականորեն պաշտպանելու ձևերի մասսայական պրոպագանդան՝ կազմակերպելով համապատասխան զեկուցումներ, զրույցներ ռազմական գիտելիքների յերեկոներ, ռազմական ցուցահանդեսներ, եքսկուրսիաներ, ճամբարների այցելություններ և այլն։ Անհրաժեշտ է լայն կերպով ոգտագործել ռազմական պրոպագանդային նվիրված պլակատներ, դիոպտրիներ,

գիագրաֆներ և այլ պարզ հասկանալի միջոցներ։ Ա-ռանձնապես ուշադրություն դարձնել քիմիական պաշտպանության, հրաձգային գործի և ռազմական տեխնիկայի պրոպագանդայի վրա։

5. Անհրաժեշտ է ուժեղացնել գրադարաններն ու ընթերցարանները հանրամատչելի ռազմական գրականությամբ լրացնելու գործը, ինչպես և այդ գրականությունը միության անդամների մեջ տարածելու աշխատանքը։

6. Կուլտ-ֆոնդերից ավելի գումարներ բաց թողնել՝ արհմիության անդամների մեջ հրաձգային սպորտը զարգացնելու, ձգարաններ կազմակերպելու համար և անհրաժեշտ ռազմական պիտույքներ ձեռք բերելու, ինչպես և ռազմական պրոպագանդայի նպատակով։

7. Միջոցներ ձեռք առնել՝ հրաձգային սեկցիաների հրահանգիչների բավարար կադր՝ և ակումբներին ու կարմիր անկյուններին կից ռազմական գիտելիքների խմբակների ղեկավարներ պատրաստելու համար։ Այդ աշխատանքը տանել ռազմական կազմակերպությունների ու Պաշը-ավիաքիմի հետ միասին։

8. Այս ամբողջ աշխատանքն ավելի հաջողությամբ տանելու նպատակով արհկազմակերպությունները գործնական կապ պիտի հաստատեն տեղական մարմինների և Պաշը-ավիաքիմի կազմակերպությունների հետ ոգտագործեն նրանց ուժերը՝ զեկուցումների, դրույցների, պարապմունքի ծրագրի մշակման և այլնի համար, ինչպես և մասսայական նախաձեռնությունները միասին անց կացնելու նպատակով։

9. Անհրաժեշտ է արհեստակցական մամուլում լայն կերպով դնել յերկրի պաշտպանության խնդիրնե-

րի լուսաբանման հարցը, ինչպես և միությունների նախաձեռնած միջոցները ռազմական պրոպագանդայի ու հրաձգային սպորտի մասին։

Ներկա մոմենտում բացառիկ կարևոր նշանակություն տալով արհմիության անդամների մեջ տարվող և տարվելիք ռազմական պրոպագանդային ու հրաձգային սպորտին՝ ՀԱՄԿԽ-ը առաջարկում է բոլոր արհկազմակերպություններին՝ քննության առնել գործնական միջոցներ նախաձեռնելու խնդիրը, առավելագույն նախաձեռնողություն ու յեռանդ գործադրել՝ սույն նամակում մատնանշված միջոցներն արագորեն ու լիովին կյանքում կիրառելու համար։ Լավագույն հրաձիգների կադրեր տալը և պրոլետարիատի լայն մասսաններին սովորեցնելը զենքի հետ վարվել, իր սոցիալիստական հայրենիքը պաշտպանելու համար—այս է մեր բոլոր արհկազմակերպությունների հերթական խնդիրը։

Ընկերական բարևներով՝

ՀԱՄԿԽ-ի նախագահ՝ **ՏՈՄՍԿԻ**

ՀԱՄԿԽ-ի նախագահության անդամ
կուլտ-բաժնի վարիչ՝ **ՅԵՎՐԵՅԻՆՈՎ**

ՌԱԶՄԱԿԱՆԱՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՊՐՈՖՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Պատրաստ լինել պատերազմին, այդ նշանակում է գիտենալ ինչպես և ինչով ես կռվելու։ Իսկ ազգաբնակությանը պատրաստել պատերազմի, այդ արդեն նշանակում է առաջին հերթին բարձրացնել մասսայի ռազմական գիտելիքների մակարդակը։ Այս նպատակի համար պրոֆմիությունները, իբրև լայն մասսայականկազմակերպություններ, պետք է սկսեն մասսայական բացատրական աշխատանք, ոգտագործելով միությունական աշխատանքի բոլոր մեթոդներն ու ձևերը. զրույցներ, զեկուցումներ վերահաս պատերազմի վտանգի մասին, կազմակերպել ռազմական անկյուններ և ցուցադիրներ, վորոնք պարզաբանելին ապագա պատերազմների բնույթը, ռազմական թեմա ունեցող հարց ու պատասխանի յերեկո կազմակերպել, կազմակերպել հուշի յերեկո մասնակցությամբ պատերազմում յեղողների և այլն և այլն։ Այս բոլոր միջոցները պետք է ոգտագործել—պրոֆմիություններին ծանոթացնելու մեր միջազգային դրության հետ, ինքնապաշտպանության հերթական խնդիրների, մեր հարևանների հետ և այլն։

Բացի սրանից պետք է հիմնարկություններում և կարմիր անկյուններում, ակումբներում, հանրակացարաններում կազմակերպել ռազմական գիտելիքների խմբակներ, վորտեղ պրոֆմիության

անդամներին կարելի կլինի ծանոթացնել ժամանակակից պատերազմի մեթոդների և յեղանակների հետ։

Պրոֆմիությունների կուլտկրթական աշխատանքների խնդիրն է բավարարել իր անդամների կուլտուրական պահանջները—ըստ մոմենտի և պրոֆշարժման հրատապ խնդիրների։

Ներկայիս պրոֆշարժման խնդիրներից մեկն էլ աշխատավոր մասսայի ռազմականացումն է, պրոֆմիության անդամների ռազմական գիտելիքների մակարդակի բարձրացումը։

Այս պատճառով նպատակահարմար է ռազմական գիտելիքների խորացրած աշխատանքները տանել խմբակներում, վորի համար անհրաժեշտ է կազմակերպել ռազմական տակտիկան ուսումնասիրող խմբակ, ռադիոհեռագրական խմբակ, քիմիական խմբակ, ռազմագիտական և այլն խմբակներ։

Ինքնապաշտպանության գործը պահանջում է ձեռք բերել գործնական գիտելիքներ, վոր կարելի լինի ինքնապաշտպանության ժամանակ նրանից ոգտվել՝ այս պատճառով՝ ռազմական պրոպագանդան՝ լինի այդ մասսայական, թե խմբակային՝ պետք է գործնական բնույթ կրի։

Ռազմական պրոպագանդայի համար անհրաժեշտ է ոգտագործել և մյուս ակումբային աշխատանքները՝ դասախոսությունները, եքսկուրսիաները, զրոսանքները և այլն. Այսպես որինակ աշխարհագրության մասին դասախոսելիս պետք է ծանոթացնել իր սահմանների, հարևանների հետ և որինակ՝ ինչպես գործածել քարտեզը։

Գալիք պատերազմի ժամանակ լայն չափով պետք

եռ գտագործվի ավիացիան. Թշնամին առաջի հերթին պետք է աշխատի լքել մեր թիկունքը, այս պատճառով կարևոր է, որ ազգաբնակությունը, մանավանդ բանվորական շրջանները, իմանա, թե ինչպես ընդդիմադրեն թշնամուն, ինչպես պաշտպանեն մեր գործարաններն ու յերկաթուղիները։

Կապիտալիստական յերկրները ահռելի քանակությամբ գազեր են պատրաստում. բավական է ասել, որ Ֆրանսիան տարեկան արտադրում է 12.000.000 փութ գանազան հեղձուցիչ գազեր։

Ինքնապաշտպանության համար պատրաստվելիս մենք պետք է կանանց ևս քաշենք դեպի այս աշխատանքները, կազմակերպելով նրանց համար հատուկ սանիտարական խմբակներ, որտեղ նրանք կծանոթանան, թե ինչպես պետք է քույրություն անել, ինչպես պետք է առաջին ոգնությունը ցույց տան՝ թե ճակատում և թե թիկունքում։ Բացի սրանից՝ պետք է կանանց մասնակից անել և այն խմբակներում, որտեղ նրանք ոգտակար կարող են լինել, այսպես օրինակ ռադիոհեռագրի, քիմիական և այլն։

Յերկրի ինքնապաշտպանության շահերը պահանջում են զարգացնել նաև հրացանաձիգ սպորտը։ Պրոֆմիությունները պետք է աշխատեն ամեն մի ակումբին կից ստեղծեն ձգարան (տիր), բացի սրանից յեղածներն ել լայնացնեն։

Հրացանաձգության գործը մեծ նշանակություն ունի ինքնապաշտպանության համար։ Այս պատճառով է, որ ընկ. Տոմսկին ասել է՝ «այն պրոֆմիությունը, որ ավելի շատ միջոցներ կհատկացնի հրացանաձգության սպորտի կազմակերպման համար, այն պրոֆմիության անդամը, որը կստանա առաջին հրացանաձգության մրցանակը, մեր օրերին կլինի օրինակելի պրոֆմիություն, օրինակելի պրոֆաշխատավոր»։

Ռազմական պրոլետարական պրոֆմիության կուլտաշխատանքների անհրաժեշտ մասն է։ Այս պատճառով, ռազմական գիտելիքների խմբակավարների պատրաստելն ու վերապատրաստելը, անկյունների և զրույցների կազմակերպումն, պրոֆմիության կուլտաշխատանքների հերթական խնդիրն են, որպիսի աշխատանքները անհրաժեշտ են համաձայնեցնել Պաշը-ավիաքիմի և զինվորական մարմինների հետ։ Այս աշխատանքների իրականացումն ամբողջապես ընկնում են բանվորական ակումբների վրա։

Պետք է շտապել, քանի թշնամին մեր դուռը չի բաղխել։

ԶԻՆԱԹԱՓՈՒՄ ՈՒՐԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Խոսք բացվեց խաղաղության մասին։
Սկսողը Ամերիկան եր, պարզախոս քեռի Սամը։

Ամուր և միջազգային պրոլետարիատի կապը, Թող սարսափեն հասատափորները։

— Յես խաղաղության կողմնակից եմ,—ասավ կիսահարգելի միտրը։ մի կողմ շպրտենք սպառազի-

նումը և աշխարհիս յերեսին կտիրի խաղաղությունն ու մարդկային բարորությունը։

— Բայց դուք, միստր, հավատում եք խաղաղության, նրա թևից քաշելով հարցրեց փոքրիկ Յապոնիան։

— Յես... ասենք, չեմ հավատում, մրմռած միտրը,— բայց դե... յես այդ իմ մասին չեմ ասում, այլ

Այն ժամանակ, յերբ կոմունիստները տառապում են Բելգիայի բանտերում, Հ-րդ ինտերնացիոնալի ղեկավար Վանդերվելդեն բաղմել է Բելգիայի մինիստրական գահին։

այդ անիծված Անգլիայի մասին։ Գուցե նա հավատում է խաղաղության...

— Յես ել խաղաղության կողմնակից եմ... մրընչաց Անգլիան։ Զինաթափում սկսենք և աշխարհիս յերեսին խաղաղություն կտիրի...

— Դուք, սեր, հավատում եք խաղաղության,—

ընջաց քեռի Սամը՝ քաշելով անգլիացի Ջենտլմենի փեշից։

Ջենտլմենը սպառնալից կերպով կրճատացրեց ատամները, բայց իսկույն իրեն զսպելով՝ սպառնալիքը ժպիտի փոխեց։

— Ցեռ չեմ հավատում... բայց ես խոսում եմ

Սոցիալիստական շինարարությունը ռումբ է, որը նետվել է բուրժուական աշխարհը

այդ սրիկա Ֆրանսիայի մասին, զուցե նա հավատում է խաղաղության...

— Ցեռ ես խաղաղության կողմնակից եմ, կոկետությամբ մեջ ընկավ գեղեցկուհի Ֆրանսիան։—Պետք է սրերից ու դաշույններից խոփեր կռել և յերկրիս յերեսին խաղաղությունը կթագավորի...

— Դուք հավատում եք խաղաղության, տիկին, հետաքրքրվեց Ջենտլմենը, թեքվելով դեպի նրա ականջը։ Ֆրանսիան իր թունոտ հայացքը հառեց նրա աչքերին...

— Չեմ հավատում... Չեմ հավատում, բայց յես խոսում եմ այդ սրիկա և ձեր բարեկամ Իտալիայի մասին... Արդյոք նա չի՞ հավատում...

— Ցեռ նույնպես խաղաղության կողմնակից եմ... լրջորեն հայտարարեց Իտալիան... պետք է զինաթափ լինել և...

— Հավատում եք խաղաղության, ըրթեց Իտալիային Ֆրանսիան...

— Ներեցեք... պատասխանեց նա... Ցեռ խոսում եմ Բալկանների մասին... Ո՞վ գիտե, զուցե նրանք հավատան...

Այսպես զրույցն ու հավաստիացումները շարունակվում էին յերկար...

Չե՞ վոր հենց դրա համար էր հրավիրված ծովի ու ցամաքի զինաթափման կոնֆերենցիան, վոր խոսեն, զրուցեն...

ՊՆԴԱՃԱԿԱՏ „ԽԱՂԱՂԱՍԵՐՆԵՐԸ"

Անգլիայի պնդաճակատ կառավարությունը, վոր այժմ համաշխարհային ժանդարմի ու բանվոր դասակարգի հոգեառի դերն է կատարում, սպառազինվելու համար վոչ մի ուժ ու միջոց չի խնայում։ Կանոնավոր բանակին զուգընթաց Անգլիայում կան մոտ 1500 հրաձգային ակումբներ, ընդհանուր առմամբ մոտ



Անգլիական նոր զրահանավ

Ժնևում Ամերիկան, Անգլիան և Ցապոնիան զբաղվում են ծովային-հազմական ուժերի «նվազեցման» խնդրով, իսկ իրենց յերկրներում լկտիաբար ավելացնում են ռազմական ուժերը։

150,000 անդամով։ Բացի այդ, կան կրոնական յերիտասարդության ռազմական ընկերություններ 50,000 անդամով, բոյսկաուտներ 300,000 հոգի, նախագինակոչային յերիտասարդության կաղետական կորպուս՝ 120,000 հոգի։ Վերջինս 1926 թվի ընթացքում կառա-

վարությունից մոտ 15,000 ֆ. ստերլինգ նպաստ և ստացել։

Պնդաճակատ կառավարությունը 1926—1927 թ. հատատել է ռազմական բյուջեն 577,5 միլիոն դոլլար գումարով, ի դիմաց 1913 թվի 430 միլիոնի, բացի այդ բրիտանական կայսրության ուժերի սպառազինման համար խոշոր գումարներ են ստամագրվում նըշան յենթակա յերկրների բյուջեյից։ Այսպես՝ 1926—27 թ. Հնդկաստանի ռազմական ծախսերը կազմում էին

Անգլիական նոր ավտոմոբիլ-տանկ

200 միլիոն դոլլար, (Հնդկաստ. ամբողջ պետական ծախսերի 41%-ը), ի դիմաց 1914 թ. 96 միլիոնի (պետական ամբողջ ծախսի 31,3%)։

Վոգեորված համաշխարհային ժանդարմի օրինակով՝ մյուս բուրժուական պետությունները ևս, բացի իրենց կանոնավոր բանակի շարքերն ավելացնելուց, ձգտում են նույնպես ամրապնդել իրենց ուժերը, կամավոր ռազմական միություններով, վորոնք կառուցված են դասակարգային խիստ սկզբունքներով։ Իտա-

Ա. Մեսրոպյան անվ. Մատենադարան
3295 -Դ

լիայի ֆաշիստական միլիցիան, Ամերիկայի ֆաշիստական խմբերը, ֆիննական «շյուցկորները» և լեհական «հրաձիգները» բոլորն էլ կապիտալիստական կարգերի զինված նեցուկն են և ռազմական ուժերը՝ ներքին ու արտաքին պայքարի համար։

Կապիտալիստական հասարակության ներսում յեղած դասակարգային պայքարը անվստահություն և ստեղծում դեպի բանակը և բուրժուական խավերի նախապատրաստություն և պահանջում։



Ամերիկայում հրաձգային ընկերությունների թիվը հասնում է մոտ 4,000-ի, ընդհանուր առմամբ 237,000 անդամով։ 1926 թվին այդ ընկերությունները 102,000 դոլլար նպաստ են ստացել։

Ֆրանսիայում կան մոտ 10,000 սպորտային ու հրաձգային կազմակերպություններ, վորոնք 1926 թվին ստացել են 8,101,000 ֆրանկ նպաստ։

Իտալիայում բացի ֆաշիստական յերիտասարդությունից (300,000 հ.) կան նաև յերկու ֆաշիստական ընկերություններ «Բալլոլ», վորն ընդգրկում է 9—13 տարիկան յերեխաներին և ֆաշիզմի ավանգարդ», վոր ընդգրկում է 13—18 տ.։

Ֆինլանդիայում—«շյուցկորները»,

Եստոնիայում—«պաշտպանության լիգան»,

Լատվիայում «պաշտպանության կազմակերպությունը», և այլն, և այլն։

Լեհաստանում—«հրաձգային միությունը» ունի մոտ . . . . . 280,000 անդ.

«Սոկոլ» միությունը	. .	60,000 »
«Գարցեր»	. . . .	80,000 »
«Հալլերովեց»	. . . .	20,000 »
«Դովբարչիկների»	. . .	15,000 »
«Պովարանցիների և զինվորների		30,000 »
«Գաղութայիններ»-ի	. .	30,000 »
«Պահեստի սպաների և յենթասպան.		50,000 »
		565,000 մարդ

Բոլոր վերոհիշյալներն այն են ասում, վոր բուրժուազիան կատաղի կերպով կռվի յե պատրաստվում և իր ռազմական ուժը կառուցում է վոչ միայն բանակի, այլ և իր դասակարգի ռազմա-ֆաշիստական հասարակական կազմակերպությունների վրա։

«Պնդաճակատ խաղաղսերները» վոչ մի ուժ ու միջոց չեն խնայում պատերազմի համար։

ԱՐԴՅՈ՞Ք ՍԱՐՍԱՓԵԼԻ ՅԵ ԳԱԶԱՅԻՆ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ

Մի ամբողջ շրջան սուր թունավոր նյութերով վարակելու համար հարկավոր է մի ոդային եսկադրիլիա, բաղկացած հարյուր ոդնավից։ Ըստ վորում, վորպեսզի այդ եսկադրիլիան հաջողություն ունենա, պետք է թշնամուս երբիտորիայով անարգել թափչք գործի մի քանի հարյուր կիլոմետր տարածություն։

Հասկանալի է, վոր դժվար է այս իրագործել, վորովհետև վոչ մի յերկիր պատերազմի մեջ չի մտնի բացարձակապես անպատրաստ դրությամբ և առանց պաշտպանության վորևե միջոց ունենալու։

Նույն պատճառներով դժվար է նաև մեծ թվով հրկիզող բաղադրություններ գցելը, վորոնց ներգործությունը լիակատար լինելու համար հարկավոր է, վոր այդ այերո-ռումբները ամենաճիշտ կերպով ընկնեն վորոշված կետի վրա, մինչդեռ ոդանավի ոսվատնելու ճշտության խնդիրը դեռևս անլուծելի է մնում։

Միատոնները տարբերվող ազդեցություն ունեն չափազանց աննշան թվով թունավոր նյութեր։ Մնացած գազերը կամ բոլորովին չեն ազդում մետաղների վրա և կամ շատ չնչին ազդեցություն են ունենում։

Յերկար ժամանակով (մի շաբաթ) հողը վարակում են շատ քիչ թվով գազեր։ մեծամասնությունը շատ շուտով վոչնչանում են՝ նույնիսկ առանց գազը մաքրելու միջոցներ գործադրելու։

Այս ամենից հետևում է այն, վոր ռազմական

տեխնիկայի վերջին խոսքով կազմակերպած քիմիական հարձակումն էլ անդառնալի կորուստ և սպառնալիք չի կարող լինել։

Հակագազ հագած զինվոր

Իհարկե, չպիտի յեզրակացնել, թե քիմիական պատերազմներին պատրաստվելու խնդրում կարելի է հույս դնել «բարդի բերմունքին»։ Բոլոր բազմամարդ ընակավայրերում, մանավանդ արդյունաբերական գործարանային կենտրոններում, վորպես գազային հարձակման ավելի յենթակա վայրեր, պիտի ստեղծել պատրաստված ավիաիսմ-կամանդաններ, կոնավորել գազերից պատսպարվելու վայրեր, կազմակերպել սննդանյութերն ու ջուրը գազերից ապահովելու գործը, վստահելի կերպով պիտի ապահովել ելեքտրական ցան-

ցերը, կայարանները, հիվանդանոցները և այլն։ Իսկ այն բանվորները, որ ըստ իրենց աշխատանքի բնույթի հարկադրված են բաց ողում լինել, պիտի սովորեն հակագազային դիմակ բանեցնել և պիտի ապահովված լինեն համապատասխան քանակությամբ հակագազերով։

Վտանգ կա և առանց չափազանցելու այդ վտանգը, չպետք է նաև աչքերը փակել նրա առաջ։

Ի՞ՆՉՊԵՍ ՊԻՏԻ ՄԱՐԴ ԻՆՔԸ ՊԱՇՏՊԱՆՎԻ ԳԱԶԵՐԻՑ

Գազերից անհատորեն պաշտպանվելու ամենահասարակ միջոցը, որը մարդուն ապահովում է շրջա-



Հակագազ հագած զինվորներ

պատի մթնոլորտի թույնից և հնարավորություն է տալիս նրան գնալ այս այն կողմ ու չընդհատել իր աշխատանքները դա հակագազն է։

Անցյալ պատերազմի սկզբից, մի շարք անհաջող փորձերից հետո, բոլոր կռվող բանակները կանգ առան «ածխային» հակագազի վրա։

Հին բանակի և կարմիր բանակի զինավորման մեջ մինչև այժմ ել Ֆուում և Կումմանտա-Զելինսկու սիստեմի հասարակ թիթեղի հակագազը, որն ունի յերկու անցք, նրա ներսում գտնվում է փշրված փայտի ածուխ, որն այն հատկությունն ունի, որ կլանում, իր մեջ է հավաքում թունավորող նյութերի (գազերի) մեծամասնությունը։



Հակագազի ածուխով լցված տուփը

Վորպեսզի ածուխը այս կամ այն կողմը չթափվի, սովորաբար ծածկվում է մանր մետաղի ցանցերով։

Քթի միջով թույնը թոքերի մեջ չանցնելու և աչքերն ապահովելու համար ածուխ գրված տուփի («ռեսպիրատորային տուփ») վերին մասին ռեզինի խողովակի միջոցով միացվում է գլխակ, նույնպես ռեզինից, որն աչքերի գլխաց ապակեպատ բացվածք և ունենում և ամուր փաթաթվելով գլխին, չի թույլ տալիս, որ գազը մտնի քթիթը, ականջները և աչքերը։

Հասկանալի է, որ ածուխով տուփը ա ն պ ա յ մ ա ն գ ե ր մ ե տ ի կ պիտի լինի, այսինքն՝ բացի իր



Հակագազի դիմակը

յերկու անցքերից ուրիշ տեղով ոդի հոսանք չպիտի անց կացնի։ Սեփական միջոցներով «տնավարի» կերպով հակագազային տուփի նյութ կարող են լինել վոչ միայն մետաղի շերտերը, այլ և վորևե այլ գերմետրիկ նյութ (թեկուզ հենց շիշը)։ Հակագազը փորձել կարելի է վորևե սուր հոտի միջոցով։ Լավ հակագազի միջով վատ հոտը չպիտի անցնի։ Ծխի վերաբերմամբ չպիտի փորձել հակագազը, վորովհետև ծուխը ածուխի միջով անցնում է։

ՀՐԱՁԳԱՅԻՆ ՍՊՈՐՏ

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Հրաձգային սպորտի հիմնական բջիջը հրաձգային սեկցիան է, որ կազմակերպվում է հատուկ կանոնադրության համաձայն (տես հավելված № 1)։

2. Հրաձգային սեկցիաներում ներքին կարգ ու կանոնը սահմանվում է համաձայն «կանոնադրության» և հատուկ հրահանգի հիման վրա։

3. Ռազմական վարչությունների հետ պայմանավորվելու միջոցով սերտ կապ և հաստատվում՝ ինչպես ռազմական ձգարանները (тир) և հրաձգարանները (стрельбище) ոգտագործելու, այնպես էլ (համապատասխան արժեքով) զենք ու փամփուշտ ստանալու իմաստով։

4. Նման կապ պիտի հաստատել նաև տեղական վորսորդական կազմակերպությունների հետ, վորտեղից մասնավորապես հրաձգային սեկցիաների աշխատանքներին ոժանդակելու համար պիտի վերցնել փորձված հրաձիգներ՝ համապատասխան միության անդամների շարքերից։

5. Հրահանգչական կազմը համալրվում է (комплектуется) նախ՝ հատուկ ծրագրով հրաձգային վորոշ դասընթացքներ անցած անձերից, կամ՝ զորացրված կարմիր հրամանատարներից, վորոնք լիովին յուրացրել են ժամանակակից հրաձգային սպորտի հիմունքները։

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

6. Ուսուցման հիմքում պիտի դրվի ակտիվ շարժման մեթոդը—այսինքն՝ ավելի քիչ տեսական, ավելի շատ գործնական։

7. Ղեկավարն ինքը պիտի լավ հրաձիգ լինի, վորովհետև ուրիշներին հրաձգություն սովորեցնել կարող է նա, ով տիրապետում է այդ արվեստին։

8. Սովորողների յուրաքանչյուր խմբակը 10 հոգուց ավելի չպիտի լինի։

9. Ամբողջ ուսուցումը պիտի կատարվի 6—7 ժամում, այնուհետև սովորողներն անցնում են անհատական վարժության (тренировка)։

10. Տեսական տեղեկությունները պիտի անցնել գործնականին զուգընթաց։

11. Յուրաքանչյուր ուսուցումը պիտի տարվի ստիճանաբար և մրցակցության սկզբունքով։

12. Շեշտակի-դիպուկ հրաձգությունն անցնելուց հետո՝ անհրաժեշտ է սկսել վերաձիգ նշանառության (на-вскидка) ուսուցումը։

13. Հրաձգության ուսուցումն անհատական մոտեցում է պահանջում դեպի սովորողը։

14. Անհրաժեշտ է հրաձգություն սովորեցնել հետևյալ դիրքերով—կանգնած կամ ծունկի նստած և պառկած։

15. Խորհուրդ չի տրվում հենարաններ ոգտագործել. անհրաժեշտ է լայնորեն գործադրել փոկերի (ремень) ոգտագործումը։

16. Նշանառման պարագաներից խորհուրդ է տրվում ոգտագործել «Ալ՛մենա» գործիքը, վորը բոլոր

նշանառման պարագաներից լավագույնն է և հնարավորություն է տալիս վարժություններ անել՝ վոր սենյակումն էլ ցանկանաս։

17. Հրաձգության մեջ նվաճումներ ունենալու համար անհրաժեշտ է սեկցիայի անդամներին ճիշտ ու սիստեմատիկ ձևով նախապատրաստել ու մարզել։

Փոքրատրամաչափ (малокалиберный) հրացաններից միջազգային մրցակցության տարածությունը հիսուն մետր է (ընկ. Սմիրնովի ռեկորդը «պառկած» դրությունից 40 գնդակից № 6 խփեց 196 տեղ)։

18. Ամբողջ ուսուցումը պիտի հենվի գլխավորապես փոքրատրամաչափ զենքի՝ այն է—«Գեկկ»-ի և «Սմիրնովսկու» հրացանի վրա։

19. Փոքրատրամաչափ հրացանները կարող են ծառայել ինչպես վարժության, ռազմա-մարտական նախապատրաստում անցնելու, այնպես էլ խոշոր թռչուններ ու մանր կենդանիներ վորսալու համար։

20. Փոքրատրամաչափ հրացաններից հրաձգությունը կատարվում է 25, 50, 75 և 100 մետր տարածությունների վրա։ Առաջին ու յերկրորդ տարածությունների վրա հրաձգությունը կատարվում № 6 նշանին իսկ վերջին յերկու տարածություններից № 7 նշանին։

21. Փոքրատրամաչափ հրացանից (22 կալիբր) կարելի յե կրակել ինչպես հատուկ փամփուշտով, այնպես էլ «Մոնտեքրիստո»-ի համար պատրաստված կարճ փամփուշտով։

22. Բացի փոքրատրամաչափ հրացաններից՝ անհրաժեշտ է հրաձգություն կատարել նաև կոտորիկնե-

րով (дробинками)՝ ռազմամարտական հրացաններով և «նագան» սիստեմի ատրճանակներով։

23. Կոտորիկներով հրաձգությունը թեև այն եֆֆեկտը չի տալ, ինչ վոր գնդակով, բայց ձմեռվա շրջանում, փակ շենքերի մեջ հաջողությամբ կարելի յե կիրառել. ավելի փոքր տեղ ե պահանջում, եժան ե և հարկավոր դեկավարություն լինելու դեպքում սկսնակներին շատ ոգուտներ կտա (նշանառումը, հրահանը քաշելը և այլն)։

24. Կոտորիկներով հրաձգություն պիտի կատարել՝ հրացանից 10—15 քայլի վրայից, իսկ «նագան»-ից 7 քայլի վրայից։ Ավելի մեծ տարածություններից արձակելը միտք չունի, վորովհետև իջնում ե դիպուկությունը (меткость)։ (Կոտորիկներով հրաձգություն կատարելու համար հրացաններից հանձնարարվում ե յերկար, բաղադրյալ փողավորները)։

25. Ձմեռ ժամանակ շենքերում հրաձգություն կարելի յե կատարել գլխավորապես փոքրատրամաչափ հրացաններով, կոտորիկներով՝ «Նագանով» և 3 գծանի հրացաններով։

26. Դրան զուգընթաց՝ նորեկները պիտի յուրացնեն զենքը խնամելու և պահելու ձևերը։

27. Դարնան գալուն հետ՝ հրաձգային սպորտը դուրս ե բերվում բաց ոդը։ Սպորտ-հրապարակի կողքին, կամ նրանից վոչ հեռու, բաց ձգարաններում (тир, հրաձգություն և կատարվում փոքրատրամաչափ հրացաններով—50, 75, 100 մետր տարածության վրա, ինչպես և հրացանից ու «նագան»-ից՝ պակասեցրած լիցքով (уменьшенный заряд)։

28. Հենց առաջին հարմար առիթին, համաձայ-

նության գալով տեղական զինվորական կազմակերպությունների հետ, անհրաժեշտ ե մի շարք հրաձգություններ կատարել զինվորական հրաձգարանում, ռազմական հրացաններով ու փամփուշտներով։

29. Հրաձգարանում, մարտական վիճակում ու բնական պայմաններում սովորողները վերջնական վարժություն են ձեռք բերում, ստուգման են յենթարկում հենարաններից ոգտվելուց տարածությունը չափելու և այլն փորձերը։

30. Տարածություն վորոշելիս՝ խորհուրդ ե տրվում ոգտվել այն ցուցմունքներից, վոր կան ռազմա-հրաձգային կանոնագրության մեջ։

Հրաձգային սեկցիայի 50—100 անդամի համար զենքերի և այլ պարագաների մոտավոր ցուցակը, ինչպես և հրաձգային սպորտին վերաբերող գրականության ցուցակը տրված ե առանձին։

ՀՐԱՁԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՐՔԱՎՈՐՎԵԼԸ

Փոքրատրամաչափ հրացաններով և կոտորիկներով հրաձգություն կատարելու համար կարելի յե հարմարեցնել 30—40 քայլ յերկարությամբ վորևե ազատ ներքնատուն։

Այդպիսի ներքնատունը 2—3 լամպով լուսավորելուց, պատերն սպիտակացնելուց, ոդանցք բանալուց և և պատի մոտ գնդակներ բռնող վահան դնելուց հետո, կարելի յե արդեն ձգարանը (тир) պատրաստ համարել և սկսել հրաձգությունը։

Յեթե ներքնատուն չկա. հրացանաձգության համար կարելի յե հարմարեցնել նույն չափի վորևե մեծ

սենյակ։ Դրա համար հետևյալ հարմարությունները պիտի ստեղծել.

Շարժական տրավերս-վահան, վոր բաղկացած է փայտե շրջանակից (գրատախտակի նման). այդպիսի շրջանակի փորատների (паз) մեջ ազատորեն մտնում են մոտ 2 վերշոկ հաստության տախտակներ։ Յերկու հարևան տախտակների մեջ բացվում է պատուհան-հրակնատ (амбразура), այն չափով, վոր հրաձիգը հրաձգի վրայից նայելով այդ պատուհանով՝ տեսնի նշանն իր ամբողջությամբ։

Այսպիսով, յերկու հարևան տախտակների մեջ բացած պատուհանը կարելի յե ազատորեն տեղափոխել, նայած թե ինչ դրությունից պիտի կատարվի հրաձգությունը։ («կանգնած» դիրքով արձակելու համար պատուհանի կենտրոնը պիտի լինի 2 արշին բարձրության վրա, «նստած» կամ «չոքած» դիրքից՝ 1 արշին և «պառկած» դիրքից՝ 1/2 արշին)։

Տրավերսի մեծությունը 2½ մետր է. յեթե դահլիճը մեծ է, պետք է դնել 2 տրավերս։

Այդպիսի տրավերս-վահանը «կրակի գծից» 6 արշին հեռավորության վրա յե գտնվում։

Հրաձգությունն ավարտելուց հետո, կարելի յե վերցնել այդ տրավերսը և շենքը ազատ կլինի ֆիզկուլտուրայի այլ տեսակի զբաղմունքների համար։

Այսպիսի տրավերսների գործադրությունն ապահովում է չարաճճի ու հետոստող գնդակներից, վորովհետև, իսկական նպատակից շեղվող բոլոր գնդակները բռնվում են այս վահանի կողմից։

Բացի այդ տրավերսից, պետք է վտանգվելուց ապահովել նաև այն պատը, վորի մոտ դրվում է

նշանառության իրը։ Դրա համար պատի մոտ կամ ավազով լի տափակ արկղ է դրվում և կամ 2 վերշոկ հաստության տախտակներից շինված մի վահան։

Այսպիսի շենքերում հրաձգություն կարելի յե կատարել ձմեռը։

Իսկ բաց ոդ դուրս գալուց հետո, սպորտային հրապարակին կից կարելի յե կահավորել բաց ձգարան, վոր կարելի յե շինել հետևյալ ձևով։

Ընտրվում է մի հարթ տարածություն՝ 8 մետր լայնությամբ և 35—100 մետր յերկարությամբ։ Այդ հրապարակը յերկու մասի բաժանելով՝ շինվում է առաջին թումբը—3—4 արշին բարձրությամբ և վերջում էլ յերկրորդ թումբը՝ նույնպես 4 արշին բարձրությամբ։ Հրապարակի կողմից շինվում է թումբ կամ պատնեշ՝ մոտ 2 մետր բարձրությամբ, վորն ապահովում է պատահական գնդակներից։

Այդպիսի ցանկապատը կարելի յե ոգտագործել նաև ցատկելու համար (հրաձգային պարապմունքներից ազատ ժամանակ), ինչպես և ագիտացիոն նպատակների համար։ Դրա համար ցանկապատը կարելի յե ներկել և ծածկել մակագրություններով, գծագրություններով, հրաձգության կանոններով, լավագույն հրաձիգների անուններով, լոզունգներով և այլն։

Այսպիսի բաց ձգարաններում կարելի յե հրաձգությամբ պարապել փոքրատրամաչափ հրացաններով և ռազմական հրացաններով, պակսեցրած փամփուշտներով և «նագաններով»՝ ամբողջ ամառվա ընթացքում։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ

Հրաձգային սեկցիաների աշխատանքների հաշվառման լավագույն ձևը պարբերական մրցակցությունն է։

Դրանից անկախ՝ յուրաքանչյուր հրաձգային սեկցիայում անհրաժեշտ է հետևյալ հաշվառման տվյալները պահել.

1. Զբաղմունքների մասին՝ հետևյալ դծագրությամբ—տարի, ամիս, թիվ, ազգանուն, անուն, սեռ, հասակ, կուսակցություն, կազմակերպություն, ով է ղեկավարում պարապմունքները, ինչի մասին է յեղել դասը, քանի զարկ է յեղել, հետևանքները և այլն և այլն։

3. Ռազմամթերքի յելևմտից տեսը։

3. Զենքերի և հրաձգության այլ իրերի յելևմտից տեսը։

4. Բացի այդ՝ սեկցիայի յուրաքանչյուր անդամ պիտի ունենա մի բլոկ-նոտ, վորտեղ պիտի նշանակի իր զարկերի դիպուկությունը։

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՇՄԻՈՒԹՅԱՆ ՖԻԶ-ԿՈՒԼՏ ԽՄԲԱԿՆԵՐԻՆ ԿԻՑ ՀՐԱՁԳՈՒԹՅԱՆ ՍԵԿՑԻԱՆԵՐԻ

1. Հրաձգային սեկցիան հանդիսանում է ֆիզկուլտուրայի խմբակի մի կազմակերպված մասնիկը և վերջինիս հետ կապված է իր ներկայացուցիչի միջոցով, վորը մտնում է ֆիզկուլտուրայի խմբակի բյուրոյի կազմի մեջ։

2. Սեկցիայի նպատակներն են—սեկցիայի յուրաքանչյուր անդամին ամեն տեսակի հարմարություններ տրամադրել՝ կատարելագործվելու և յերևան հանելու իր ընդունակությունները՝ հրաձգային սպորտի բոլոր տեսակների մեջ, վերջնական նպատակ ունենալով՝ յերկրին տալ դիպուկ (ճիշտ խփող) հրաձիգներ։

3. Սեկցիայի աշխատանքների ընդհանուր ղեկավարությունը պատկանում է խմբակի բյուրոյին, իսկ ներքին ղեկավարությունը՝ սեկցիայի բյուրոյին, վորն ընտրվում է իր բոլոր անդամների կողմից։

Ծանոթություն.—Բյուրոն բաղկացած է 3 հոգուց 1) նախագահ, 2) քարտուղար, 3) զենքերի վարիչ։

4. Սեկցիան կազմակերպվել կարող է առնվազն ութ անդամ լինելու դեպքում։

5. Սեկցիայի անդամ կարող են լինել արհմիու-

թյան բոլոր անդամները, տղամարդ թե կին, 15 տարեկանից սկսած և ավելի բարձր հասակ ունեցողները։

6. Սեկցիայի մեջ մտնելը կամավոր բնույթ և կրում, սակայն սեկցիայի յուրաքանչյուր անդամ խստորեն պիտի հետևի ու կատարի այն բոլոր հրահանգները, վորոշումները, կանոններն ու կարգադրությունները, վոր մշակում են ղեկավար մարմինները՝ հրաձգային սեկցիաների համար։

7. Սեկցիայի մեջ նոր անդամ ընդունելու իրավունքը պատկանում է սեկցիաների բյուրոյին, սակայն նրանք հաստատվում են ֆիզ-կուլտի խմբակի բյուրոյի կողմից։

8. Ներքին ընույթ կրող ծագած բոլոր հարցերը վճռում է սեկցիայի բյուրոն, կամ ընդհանուր ժողովը։ Իսկ այն բոլոր հարցերը, վոր կապված են խմբակի ընդհանուր շահերի հետ, վճռում է խմբակի բյուրոն կամ ընդհանուր ժողովը։

9. Սեկցիայի ուսուցման աշխատանքներն ընթանում են խմբակի ղեկավարի կամ հատուկ հրահանգչի ղեկավարությամբ և սեկցիայի բյուրոյի անդամների հսկողությամբ։

10. Ինչպես կազմակերպչական, այնպես էլ ուսուցման աշխատանքների մեջ սեկցիան հարմարվում է խմբակի ընդհանուր աշխատանքի ծրագրին և իր բոլոր սկսումները համաձայնեցնում է նրա հետ։

11. Սեկցիայի անդամները մրցակցություններին ու այլ յելույթներին մասնակցում են խմբակի բյուրոյի միջոցով։

12. Սեկցիայի ընդհանուր ժողովը հրավիրվում է

ամիսը մեկ անգամ, իսկ բյուրոյի նիստեր կայանում են շաբաթը մեկ անգամ։

13. Խմբակի ընդհանուր ժողովներում սեկցիայի բյուրոն հաշիվ է տալիս իր գործունեության մասին և այս կամ այն դրությունն ու փոփոխությունն է առաջարկում՝ ինչպես խմբակի աշխատանքները այնպես էլ իր գործունեությունը բարելավելու համար։

14. Սեկցիայի բյուրոն ընտրվում է 6 ամիս ժամանակով։ Նա ղեկավարում է սեկցիայի ներքին կյանքը, սերտ կապ է պահում խմբակի բյուրոյի հետ և հսկում է զբաղմունքների ծրագրի ու ցուցակի ճշտորեն իրագործմանը։ Ճիշտ հաշիվ է պահում սեկցիայի անդամների հաճախումների, աշխատանքների արդյունքների մասին և վերջապես, հսկում է սպորտ-հրաձգային պարագաների (инвентарь) կանոնավոր պահպանմանը։

ՀՀ Ազգային գրադարան
NL0197702

ԳԻՆԸ 20 ԿՈՊ.

Военизация Профсоюзов

Изд. СПСАрмении